ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

«22» ապրիլի 2024թ.
ք. Երևան

Որոշում N ~~04~~07

Վարչական տույժ նշանակելու մասին

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարի տեղակալ Վահագն Գրիգորյանս, քննելով.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2024 թվականի փետրվարի 21-ի թիվ /70-3/10978-2024 գրության հիման վրա հարուցված վարչական վարույթի նյութերը, այդ թվում՝ «ԹԴ ՀԱՈՒՍԻՍ» ՍՊԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի մարտի 1-ին իրականացված զննման արձանագրությունը, 2024 թվականի ապրիլի 09-ի թիվ 0422 վարչական վարույթը կարճելու մասին որոշումը,
2. վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման 2024 թվականի ապրիլի 10-ի ծանուցագիրը,
3. վարչական իրավախախտման վերաբերյալ 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ 0692 արձանագրությունը,
4. վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին 2024 թվականի ապրիլի 15-ի ծանուցագիրը:

Պարզեցի

1.Նկարագրական մաս

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և հաշվի առնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեից 2024 թվականի փետրվարի 21-ին ստացված թիվ /70-3/10978-2024 գրությունը, Տեսչական մարմնում 2024 թվականի փետրվարի 27-ին հարուցվել է թիվ 270224-248 վարչական վարույթը՝ Ընկերությունում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Հարուցված վարչական վարույթի արդյունքում պարզ է դարձել, որ խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի և 85-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է՝ Վահան Բաղդասարյանը 2023 թվականի նոյեմբերի 16-ի դրությամբ աշխատել է Ընկերությունում առանց աշխատանքային պայմանագրի կնքման (անհատական իրավական ակտի ընդունման):

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արաբկիր 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

Ընկերության տնօրեն Դավիթ Թադևոսյանը պատշաճ կարգով ծանուցվել է վարչական վարույթի արդյունքում արձանագրված խախտումների հետ կապված վարչական իրավախախտման արձանագրության կազմման տեղի և ժամանակի մասին:

2024 թվականի ապրիլի 15-ին նշանակված վարչական իրավախախտման արձանագրության կազմմանը Ընկերության տնօրենը չի ներկայացել և չի ներկայացրել միջնորդություն՝ այն հետաձգելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածը՝ 2024 թվականի ապրիլի 15-ին կազմվել է թիվ 0692 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին ծանուցագրի հետ միասին պատշաճ կարգով ուղարկվել է Ընկերության տնօրենին:

2024 թվականի ապրիլի 22-ին նշանակված վարչական իրավախախտման գործի քննությանը Ընկերության տնօրենը չի ներկայացել, սակայն ներկայացրել է միջնորդություն՝ գործի քննությունն առանց իր ներկայության իրականացնելու վերաբերյալ:

2. Պատճառաբանական մաս

Վարչական մարմինը, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2024 թվականի փետրվարի 21-ի թիվ /70-3/10978-2024 գրության հիման վրա հարուցված վարչական վարույթի նյութերը, հաստատված է համարում, որ Վահան Բաղդասարյանը 2023 թվականի նոյեմբերի 16-ի դրությամբ աշխատել է Ընկերությունում առանց աշխատանքային պայմանագրի կնքման (անհատական իրավական ակտի ընդունման), որով խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի և 85-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, հաստատված է համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է Ընկերության տնօրեն Դավիթ Թադևոսյանը (անձնագրի համար AU033855, տրված 01.07.2021 թվականին 011-ի կողմից, հասցե՝ քաղաք Երևան, Եզնիկ Կողբացու փող. 1-ին շենք, 87 բն.):

Վերջինիս կողմից վարչական իրավախախտում կատարելու մեջ առկա չեն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ

հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Նշված իրավանորմից հետևում է, որ օրենսդիրը վարչական իրավախախտման առկայության հիմքում դրել է մեղքի առկայությունը, որը կարող է դրսևորվել դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

Վարչական մարմինը գտնում է, որ Դավիթ Թադևոսյանի կողմից իրավախախտումը կատարվել է անզգուշությամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց հույս է ունեցել կանխելու դրանք, սակայն ոչ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

Նշված հոդվածից հետևում է, որ Ընկերության տնօրեն Դավիթ Թադևոսյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիաիրավական և վարչաիրավական հարաբերություններում հանդես է գալիս որպես պաշտոնատար անձ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169^5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատանքի ընդունման պահանջները բավարարող աշխատանքային պայմանագրի աշխատող պահելն առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար:

3. Եզրափակիչ մաս

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 230-րդ, 279-րդ, 281-րդ, 283-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին մասով՝

Որոշեցի

1. Դավիթ Թադևոսյանին, որպես խախտում թույլ տված անձ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի և 85-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու, այն է՝ առանց աշխատանքային պայմանագրի աշխատող պահելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 1-ին

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արաբկիրյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

մասի համաձայն ենթարկել վարչական տույժի՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ վարչական տուգանքի:

2. Սույն որոշումը ծանուցել Դավիթ Թադևոսյանին, հասցե՝ Եզնիկ Կողբացու փող. 1-ին շենք, 87 բն., էլ. հասցե՝ davit.tadevosyan.89@mail.ru:

3. Սույն վարչական ակտն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել ակտն ընդունած Տեսչական մարմին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ ՀՀ վարչական դատարան:

5. Իրերի և փաստաթղթերի հարցը լուծվել է:

Recoverable Signature

X

Signed by: GRIGORYAN VAHAGN 3914740051

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ինձ բացատրվել է, որ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 1-ին մասի, տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

Ծանոթություն՝

Իրավախախման համար կիրառվող տուգանքի վճարման պետբյուջեի հաշվի համարը՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի համար իրավախախտումների համար կիրառվող տուգանքների և պատժամիջոցների մուտքեր N900005024097.

Որոշումը ստացա

(անունը, հայրանունը, ազգանունը, պաշտոնը, ամսաթիվը)

Որոշումը ստանալուց և ստորագրելուց հրաժարվելու մասին նշում

Նշում որոշումը պատվիրված փոստով ուղարկելու և ստանալու ծանուցման մասին

(ուղարկելու ամսաթիվը, փոստային առաքանու համարը, փոստային առաքանին հասցեատիրոջը հանձնելու վերաբերյալ ծանուցագրի համարը)